«Դեղերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծ

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԸ

«**ԴԵՂԵՐԻ ՄԱՍԻՆ**» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Դեղերի մասին» Հայաստանի Հանրապետության 2016 թվականի մայիսի 17-ի ՀՕ-86-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 16-րդ հոդվածի 23-րդ մասը լրացնել նոր 7-րդ կետով՝ հետևյալ բովանդակությամբ.

«7) Սույն օրենքի 21-րդ հոդվածի 7-րդ մասի 1-ին կետին համապատասխան՝ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած քանակներով ֆիզիկական անձանց կողմից առանց հավաստագրի ներմուծվող անձնական օգտագործման դեղերի համար։»:

Հոդված 2. Օրենքի 21-րդ հոդվածի՝

1. 2-րդ մասը լրացնել նոր 3-րդ կետով՝ հետևյալ բովանդակությամբ.

«3) Սույն հոդվածի 7-րդ մասի 1-ին կետին համապատասխան՝ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած քանակներով առանց հավաստագրի անձնական օգտագործման դեղեր ներմուծող ֆիզիկական անձինք։».

2. 7-րդ մասի 1-ին կետը շարադրել հետևյալ բովանդակությամբ.

«1) օտարերկրյա պետություն մեկնող և օտարերկրյա պետությունից ժամանող ֆիզիկական անձի բուժման կուրսի կամ անձնական օգտագործման դեղերի կամ փոխադրողի կողմից և (կամ) միջազգային փոստային փոխադրումներով մեկ ամսվա ընթացքում ֆիզիկական անձանց անունով ներմուծվող անձնական օգտագործման դեղերի համար՝ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած քանակներով.»:

Հոդված 3. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող օրը: